

Ողջաբերդի սողանքային գոտու խնդիրը լուծման ճանապարհին

Ինչպես բազմիցս ներկայացրել ենք, ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ողջաբերդ բնակավայրի սողանքային գոտում գտնվող 4-րդ և 5-րդ կարգի վնասվածության աստիճան ունեցող թվով 15 բնակելի տների բնակիչներին բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան գնելու համար ֆինանսական աջակցություն կտրամադրվի:

Փոխհատուցման տրամադրման աշխատանքների կազմակերպման նպատակով մարզպետ Ահարոն Սահակյանի որոշմամբ ստեղծվել էր հանձնաժողով, որը պետք է համակարգի գործընթացը:

Մարզի ղեկավարն աշխատանքային այց է կատարել Գառնի համայնքի Ողջաբերդ բնակավայր, հանդիպել շահառու 15 ընտանիքների անդամներին՝ նրանց ներկայացնելու փոխհատուցում ստանալու ընթացակարգերը՝ ծանուցումների ստացման, դիմումների ներկայացման, ընդունված որոշումների գրանցման, փաստաթղթերի ուսումնասիրության, ցուցակների կազմման և մնացած բոլոր գործառույթների իրականացման հետ կապված:

Ահարոն Սահակյանը լսել է նաև բնակիչների կողմից բաձրաձայնված հարցեր, որոնց տրվել են մանրամասն պարզաբանումներ:

«Գառնի համայնքի ղեկավարի և Ողջաբերդի վարչական ղեկավարի հետ պետք է մեկտեղենք բոլոր ջանքերը, որպեսզի մեկնարկված գործընթացն ընթանա բնականոն՝ առանց խոչընդոտների, և շահառու ընտանիքները կարողանան ստանալ երկար սպասված փոխհատուցումը», - նշել է մարզպետ Ահարոն Սահակյանը՝ ևս մեկ անգամ վերահաստատելով իր և մարզպետարանի ընդգծված կամքը այս կարևոր որոշումը կյանքի կոչելու համար՝ այն վստահությամբ, որ հաջորդ փուլով լուծվելու են նաև մյուս բնակիչների բնակարանային խնդիրները: